«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 48)

ք. Երևան 17.11.2017թ.

## ՔԱՂՎԱԾՔ
## «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ

### 16.11.2017թ. «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՈՐՈՇՈՒՄԻՑ

Քննարկելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Վարչության 16.11.2017թ. «Կորպորատիվ պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու մասին» որոշումը, հիմք ընդունելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Կանոնադրության 3.2 կետը և «Խորհրդի գործունեության կանոնակարգի» 5.2 կետի 15) ենթակետը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.

1. Հաստատել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կորպորատիվ պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու հետևյալ պայմանները.
   1) Թողարկել կորպորատիվ պարտատոմսեր 850,000,000 (ութ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, 85,000 հատ, 36 ամիս մարման ժամկետով, տարեկան 10 տոկոս եկամտաբերությամբ, արժեկտրոնների եռամսյակային վճարումների պարբերականությամբ:
   Առաջնային տեղաբաշխումն իրականացնել 2017թ. դեկտեմբեր - 2018թ. մայիս ամիսների ընթացքում, մինչև 2018թ. մայիսի 31-ը:
   2) Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսերի սահմանված քանակը լրանալու դեպքում դադարեցնել տեղաբաշխման գործընթացը:
   3) Արժեկտրոնային եկամտի վճարման փոխանցումը կատարել վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշվեհամարներին:
   4) Պարտատոմսերի մարման փոխանցումը կատարել Բանկի կողմից տեղաբաշխման առաջին օրվանից հաշվարկված 36 ամիս անց:
   5) Մարման գումարի փոխանցումը կատարել պարտատոմսերի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա՝ պարտատոմսերի սեփականատերերի կողմից նշված հաշվարկային հաշիվներին:
2. …………………
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Խորհրդի նախագահ՝ /ստորագրություն/ Վ. Գրիգորյանց

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի ղեկավար Մ. Ստեփանյան

ABB
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
AshhAPAT-STAFF

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(հասցեն՝ ք. Երևան, Նալբանդյան 48)

ք. Երևան 17.11.2017թ.

## ՔԱՂՎԱԾՔ
## «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ

### 15.11.2017թ. «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՈՐՈՇՈՒՄԻՑ

Քննարկելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Վարչության 15.11.2017թ. «Կորպորատիվ պարտատոմսեր թողարկելու և «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդին ներկայացնելու մասին» որոշումը, հիմք ընդունելով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Կանոնադրության 3.2 կետը և «Խորհրդի գործունեության կանոնակարգի» 5.2 կետի 15) ենթակետը՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհուրդը

ՈՐՈՇԵՑ.

1. Հաստատել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կորպորատիվ պարտատոմսերի թողարկման հետևյալ պայմանները.
   1) Տեղաբաշխման ժամկետ – ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագրի գրանցմանը հաջորդող վեց ամսվա ընթացքում:
   2) Անվանական արժեք – 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ,
   3) Քանակը – 85,000 հատ,
   4) Թողարկման ընդհանուր ծավալը – 850,000,000 (ութ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ,
   5) Եկամտաբերություն (պարտատոմսերի անվանական տոկոսադրույք) – 10%,
   6) Եկամուտների վճարման կարգ - եռամսյակային,
   7) Շրջանառության ժամկետ – 36 ամիս,
   8) Համախորհրդը կարող է շրջանառության ընթացքում ցանկացած պահի երկրորդային շուկայում վաճառել պարտատոմսերը:
2. …………………
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Խորհրդի նախագահ՝ /ստորագրություն/ Վ. Գրիգորյանց

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի ղեկավար Մ. Ստեփանյան

ABB
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
AshhAPAT-STAFF